



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«10» 12 2019 N 143-Ը


ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության N 125-Լ առ 31.10.2019 հրամանով ստեղծված աշխատանքային խմբի 2019 թվականի նոյեմբերի 15-ի առցանց նիստի N 1 և 2019 թվականի դեկտեմբերի 09-ի առցանց նիստի N 2 արձանագրությունները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

- Ընդունել և 2020 թ. փետրվարի 1-ից գործողության մեջ դնել հետևյալ ազգային ստանդարտները՝
 - ՀՍ ԻՍՕ 8144-1-2019 «Ջերմամեկուսացում. Հանքային բամբակից ներքնակներ օդափոխվող ձեղնահարկերի համար. Մաս 1. Տեխնիկական պայմաններ սահմանափակ օդափոխության դեպքում կիրառման համար»,
 - ՀՍ ԻՍՕ 8144-2-2019 «Ջերմամեկուսացում. Հանքային բամբակից ներքնակներ օդափոխվող ձեղնահարկերի համար. Մաս 2. Տեխնիկական պայմաններ անսահմանափակ օդափոխության դեպքում հորիզոնական դիրքում կիրառման համար»,
 - ՀՍ ԻՍՕ 29581-2019 «Ցեմենտ. Փորձարկման մեթոդներ. Մաս 1. Խոնավ քիմիայի կիրառմամբ վերլուծություն»:
- Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել տնօրենի առաջին տեղակալ Մ. Բզնունուն:

Տնօրենի պաշտոնակատար՝  Ալբերտ Բաբայան